ՍԱՍԱՆՅԱՆ ԿՆՔԱԴՐՈՇՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՈՐՈՇ ԿՈՂՄԵՐԻ ՄԱՍԻՆ

Ա. Ա. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Ֆիրդուսին, նկարագրելով սասանյան արքա Շապուհ II-ի փախուստը հռոմեական գերությունից, պատմում է, որ նա իր ինքնությունը հաստատելու նպատակով արքայական մատանիով կնքված մի կավագունդ է ուղարկում մոգպետան մոգպետին։ Սասանյան դատաստանագրքի հոդվածներից մեկում ասված է. «Եթե նա հայտարարում է, ես այս փաստաթղթերը քեզ եմ հանձնում, ապա նրան հանձնվում է կնիքը («կավը») և փաստաթուղթը (գրավոր տեքստը)»[1]։ Բուն պահլավերեն տեքստում նշված է ոչ թե «կնիքը», այլ «կավը» («gil»): X դարի արաբ մատենագիր Մակգիսին հայտնում է Խորասանում հատուկ կավի հանույթի մասին, որն օգտագործվում էր կնքելու համար[2]։

Կավի վրա կնիքով դրոշմելու երևույթը գալիս է շատ հին ժամանակներից։ Հավանաբար մ. թ. ա. I հազարամյակի երկրորդ կեսից կավե կնքադրոշմները սկսում են օգտագործվել պաշտոնական և այլ տիպի վավերագրեր հաստատելու համար, որը հետագայում, հատկապես սասանյանների օրոք, լայն տարածում է ստանում և անցնում արաբական շրջանին։

Կնքադրոշմները կավե փոքրիկ կիսագնդեր են, կամ տափակ կլոր զանգվածներ, պատրաստված հատուկ կավից, որը շատ ճկուն է և չորանալուց հետո խիստ կարծրանում է։ Միջինասիական կնքադրոշմների մի մասի քիմիական անալիզը ցույց է տվել, որ կավին այդ հատկությունը տալու համար տալկ է խառնված եղել։

Կնքադրոշմներով կնքվել են դռներ, անոթներ, վավերացվել են երկրի արտաքին և ներքին հարաբերությունների հետ կապված պետական կարևոր որոշումներ, առևտրական հարաբերությունների, ինչպես նաև անհատական բնույթի արտոնագրեր, անձնական նամակներ, ուղերձներ և այլն։

Արևելքի տարբեր հուշարձաններում կնքադրոշմների գյուտերը ցույց են տալիս, որ դրանք միջին դարերում տարածված են եղել սասանյան Իրանում և խալիֆայության երկրներում, ինչպես նաև նրանց ենթակայության տակ գտնվող շրջաններում։ Ամենամեծ ժողովածուն (մոտ 500 կնքադրոշմ) գտնվել է 1934 թ. Պարսկաստանում, Շիրազից ոչ հեռու Քասր-ի Աբու Նասր բնակավայրի VI—VII դդ. սենյակներից մեկի հատակին[3]։ Ավելի ուշ, հյուսիսային Պարսկաստանում, Թախտ-ի Սուլեյման տաճարի պեղումների ժամանակ,

---

[1] А. Г. Периханян, Сасанидский судебник, Ереван, 1973, էջ 408։

[2] М. Е. Массон, Г. А. Пугаченкова, Оттиски парфянских печатей из Нисы, ВДИ, 1954, № 4, էջ 160։

[3] „Sasanian Remains from Qasr-i Abu Nasr", Cambridge, 1973.

նույն ժամանակաշրջանի մոտ 200 կնքադրոշմ է գտնվել տաճարական տնտեսությանը պատկանող սենյակներից մեկի միջից[4]։

Սովետական Միությունում սասանյան շրջանի առաջին կնքադրոշմները հայտնի են դարձել միջինասիական հուշարձաններից (Սամարղանդ, Թեշիկ-կալա)։ Հետաքրքիր հավաքածու հայտնի է Ակ-Դեփե ամրոցի պեղումներից (Թուրքմենիա)[5] և Աշխաբադի մոտից[6]։ Երկու կնքադրոշմ գտնվել է Ուրբնիսիում (Վրաստան), որոնցից մեկը՝ սասանյան[7] և 12 կնիքով մեկ կնքադրոշմ՝ Մինգեչաուրի V—VIII դդ. շերտերում[8]։ Անհայտ ծագումով 10 կնքադրոշմներից բաղկացած մի հավաքածու պահվում է Պետական Էրմիտաժում[9]։

Հայաստանում ամենավաղ կնքադրոշմները գտնվել են ուրարտական հուշարձաններից[10]։ Վաղ հայկական՝ մ. թ. ա. VI—V դդ. հետաքրքիր կնքադրոշմներ են հայտնի Արմավիրից[11]։

1950—1960-ական թթ. Դվին քաղաքի միջնաբերդի ստորին՝ վաղ միջնադարյան շինությունների միջից ի հայտ եկան մեծ թվով կավե կնքադրոշմներ։ Դրանցից մի մեծ խումբ գտնվեց բլրի գագաթին, վերջին Արշակունիների շրջանում կառուցված սյունազարդ դահլիճի վերին հորիզոնից, որը թվագրվում է VI դարով։ Այստեղ մի փոքրիկ սենյակում կնքադրոշմների մեծ կուտակում նկատվեց։ Այդ սենյակը հավանաբար Դվինի դիվանի մի մասն է եղել։ 1972 թ. երեք մեծ կնքադրոշմ գտնվեց Դվինի կենտրոնական թաղամասում, Կաթողիկե եկեղեցուց հարավ-արևմուտք ընկած հատվածում, IX դարի շինությունների հորիզոնից մեկում։ Կնիքների մեծ մասն ունեն արաբական արձանագրություն։ Չնայած կնիքների օգտագործման ավանդույթները գոյատևել են նաև արաբական շրջանում, սակայն մինչև այժմ աշխարհում հայտնի չէին արաբական շրջանի կնքադրոշմներ։ Դվինում IX դարի կնքադրոշմների հայտնաբերումը այս իմաստով հետաքրքիր պատմա-հնագիտական երևույթ է։

Կնքված դրոշմների վրա առաջնային տեղ են գրավում տարբեր կենդանիների և թռչունների պատկերները, որոնք, անշուշտ, կապված են եղել պաշտամունքի հետ։ Մեծ թիվ են կազմում նաև բուսական զարդերով, նշաններով, խաչերով և այլ պատկերներով կնիքները։

---

[4] R. Goble, Die sasanidischen Tonbullen vom Takht-i Suleiman und die Probleme der sasanidischen Sphragistik, „Acta Antiqua Academiae Scientiarum Hungaricae", № 19, 1971, էջ 95—112։

[5] А. Губаев, Сасанидские буллы из замка Ак-Депе, ЭВ, 1971, XX, էջ 46—49; В. Г. Луконин, По поводу булл из Ак-Депе, նույն տեղում, էջ 50—52։

[6] նույն տեղում, էջ 51, նյութերը հրատարակված չեն։

[7] Л. А. Чилашвили, Городище Урбниси, Тбилиси, 1964, էջ 155; К. А. Джавахишвили, Памятники глиптики городища Урбниси, Тбилиси, 1974, էջ 98, աղ. IX с.

[8] Г. М. Асланов, К изучению раннесредневековых памятников Мингечаура, КСИИМК, вып. 60, 1960, էջ 71; Р. М. Вандов, Мингечаур в III—VIII вв., Баку, 1961, էջ 66; Н. А. Бабаев, Глиняная булла, найденная в Мингечауре, Сб. статей аспирантов, Баку, 1966, էջ 5—10։

[9] В. Луконин, Сасанидские буллы, Сообщения ГЭ, XIX, 1960, էջ 32—35։

[10] Б. Б. Пиотровский, Кармир-Блур, II, Ереван, 1952, էջ 47—48։ Գ. Հ. Միքայելյան, Ուելիքուխի երկրի կենտրոնական կիկլոպյան ամրոցը, «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 1, էջ 125, նկ. 4։

[11] Б. Н. Аракелян, О некоторых результатах археологического изучения древнего Армавира, «Историко-филологический журнал», 1969, № 4, էջ 168, նկ. 10։

Հայ միջնադարյան պատմիչների մոտ բազմաթիվ վկայություններ են պահպանվել երկրի ներքին և արտաքին հարաբերությունների հետ կապված տարբեր փաստաթղթերի վավերացման, նվիրատվական և այլ բնույթի գործարքների կապակցությամբ կնիքների խաղացած դերի մասին։

Կնիքն առաջին հերթին ուժի, իշխանության և իրավունքի խորհրդանիշ է։ Պարսկական և արաբական աղբյուրներում բազմիցս հիշատակություններ կան այն մասին, որ սասանյան արքունիքում քաղաքացիական, հոգևորական և զինվորական բարձրաստիճան պաշտոնյաներին նշանակումից առաջ հանձնում էին զգեստներ, գլխազարդ, գոտի և կնքաքարով մատանի։

Այս երևույթը Հայաստանում նկատվել է դեռևս մ. թ. ա. առաջին հազարամյակի կեսերից, գոյատևելով նաև հին և միջին դարերում։ Կառավարման առանձին ինստիտուտների ձևավորման ժամանակ Արաբական խալիֆաթը շատ բան վերցրեց Սասանյան Իրանից։ Արաբները ևս շարունակեցին վերոհիշյալ ավանդույթը։ Այսպես, Ստեփանոս Օրբելյանը, հիշատակելով Սյունիքի իշխանների թագավորական ծագման մասին, նշում է, թե արաբներն ինչպես էին մեծարում նրանց. «Եւ այնքան անուանիք եղեն, մինչև հրամայեցաւ նոցա գահոյս ունել, և վարսակալ ածել մարգարտեայ և մատանի ունել վարազագիր»[12]։

Բարձրագույն հոգևորականության պաշտոնները նույնպես արտահայտված էին որոշակի ատրիբուտներով։ Նույն Օրբելյանը հայտնում է, որ երբ 1289 թ. Հակոբ կաթողիկոսը պաշտոնազուրկ է լինում, նա հանում և հանձնում է սքեմը, գավազանը և մատանին, որը իշխանության խորհրդանիշ էր[13]։

Հայկական աղբյուրներում հիշատակություններ կան այն մասին, որ կնիք կրելու իրավունք ունեին առավելապես բարձրաստիճան անձինք՝ թագավորը, նախարարները և հոգևորականության վերնախավը։

V դարի կեսերի միջադեպերի կապակցությամբ հետաքրքիր վկայություններ են պահպանվել Ղազար Փարպեցու մոտ։ Սասանյան արքունիքի նամակին պատասխանելու առթիվ Արտաշատում հավաքված հայ ազնվականությունը և զինվորականները «Երդուեալ ամենայն բազմութիւն զօրացն ագատաց և անազատաց, հանդերձ իշխանաւն Սիւնեաց Վասակաւ և ամենայն տանուտերամբքն և սեպհօք՝ հաստատէին զերդումն և որոց մատաննեաւ չև ևս էր կնքեալ զԱւետարանն՝ կնքէին»[14]։ Հազկերտին ուղղված պատասխանի տակ կնքում են «...նախ մատաննեաւ իշխանին Սիւնեաց Վասակայ և ապա մատաննեօք ամենայն տանուտերացն հայոց և աւագ սեպհացն...»[15]։

Աղվանքում, Վաչագան թագավորի օրոք ընդունված կրոնական սահմանադրությունը կնքում են իրենց մատանիներով՝ արքայի հրամանակատար Մուծիկը, պալատի վերակացու Միրհորիկը, 13 նահապետներ, Աղվանքի բոլոր ազնվականները։ Վերջում այն վավերացնում է թագավորը[16]։ Արտաքին հարաբերությունների հետ կապված մեկ այլ փաստաթուղթ կնքվում է Աղվանքի կաթողիկոսի, եպիսկոպոսների, վանքի, տանուտերերի, իշխանների

---

12 «Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփանոսի Օրբելյան Արքեպիսկոպոսի Սիւնեաց», Թիֆլիս, 1910, էջ 15։

13 Նույն տեղում, էջ 438։

14 «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն հայոց», Թիֆլիս, 1907, ԼԲ, էջ 129։

15 Նույն տեղում, էջ 132։

16 Մ ո վ ս ե ս Կ ա ղ ա ն կ ա տ վ ա ց ի, Պատմություն Աղվանից աշխարհի, գիրք I, ԻՁ։

և աղատների կողմից[17]։ Ինչպես նկատում ենք, կնիք ունենալու իրավունքից օգտվում էին նաև աղատները, որոնք բնակչության բավական ստվար խավն էին կազմում։ Այստեղ արդեն կնքելու սովորությունը սերտորեն առնչվում է մասնավոր սեփականության առկայության հետ, որը հավանաբար անձնական կնիք ունենալու առաջին պայմանն էր։

Նախորդ ժամանակաշրջաններում կնիքները գերազանցապես հանդես էին գալիս որպես ամուլետներ, որոնք մարդուն պահպանում էին տարբեր «կործանիչ» ազդեցություններից և մասնավորապես «չար աչքից»։ Այս երևույթն ինչ-որ չափով շարունակվում է նաև հետագայում։ Հայաստանում, քրիստոնեությունն ընդունելուց հետո, անտարակույս, շարունակվել է կնքաքարերը որպես ամուլետներ կրելու սովորությունը։ Այդ մասնավորապես երևում է հայկական հուշարձաններում գտնված միջնադարյան կնիքների վրա քանդակված տոտեմական և աստրալ պատկերներից։ Սակայն քրիստոնեությունն ընդունելուց հետո կնքաքարերը մեծ մասամբ օգտագործվում են վավերացման նպատակով, անկախ այն բանից, թե գտնվում էին տիրող նախարարական տան ներկայացուցչի կամ աղատի ձեռքում։

Քննարկելով Վրաստանի անտիկ շրջանի կնիքները, Մ. Մաքսիմովան ճիշտ կռահել է, որ կնիքները փոխարինել են նաև քիչ օգտագործելի փականքներին։ Այդ պատճառով էլ կենցաղում կնիքը քիչ թե շատ ապահովված յուրաքանչյուր մարդու և անձնական գույքի նկատմամբ սեփականատիրական իրավունքի անձեռնմխելիության գրավական էր։ Կնիքների տարածումը հին աշխարհում սերտորեն կապված էր մասնավոր սեփականության ինստիտուտի զարգացման հետ[18]։ Այս միտքը պաշտպանում է նաև Մ. Լորդքիպանիձեն, որը կնքաքարերը Վրաստանում դիտում է որպես կնիք, զարդ և ամուլետ[19]։

Հայ միջնադարյան մատենագրության մեջ խիստ ուշագրավ վկայություններ են պահպանվել նաև կնիք-մատանիների ձևերի վերաբերյալ։ Պատմիչների մոտ առանձնակի հիշատակված են թագավորական կնիքները, որ հանդես են գալիս առաջին հերթին «վարազագիր մատանեաւ» ձևով[20]։ Հավանաբար վարազի պատկերով մատանիները սասանյան և հայ թագավորների պաշտոնական կնիքներից էին։ Վարազը, որը պարսկական դիցաբանության մեջ խորհրդանշում էր Վերաթրագնային (Վահագն)[21], բազմիցս հանդիպում է պարթևական և սասանյան (մասնավորապես VI—VII դդ.) կնիքների թեմատիկայում։ Եվ պատահական չէ, որ հայկական աղբյուրները շեշտում են մատանու այդ ձևը։ Հիշատակվում են նաև «արքունական», «սովորական» մատանիները[22], որոնք, հավանաբար, անձնական կնիքներ էին։

Արաբ պատմիչ Բալաձորին վկայում է սասանյան արքունիքում պետական կնիքի կատարած դերի մասին։ Նա նշում է, որ արքաներն ունեին հատուկ

---

17 Նույն տեղում, գիրք III, Ը։

18 М. И. Максимова, Геммы из некрополя Мцхеты-Самтваро (раскопки 1938/39 гг.), «Вестник музея Грузии», т. XIV—XV, էջ 238—239։

19 М. Н. Лордкипанидзе, Геммы Государственного музея Грузии, т. II, Тбилиси, 1958, էջ 101։

20 Փավստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, 4-րդ դպրություն, գլ. ԾԳ։ Կաղանկատվացի, գիրք II, Ա։ Ս. Օրբելյան, էջ 15, Ժ, էջ 38, ԽԲ, էջ 229 և հտ.։

21 Ph. Ackermann, Sasanian Seals, Survey of Persian Art, London, 1938, I, էջ 784—815։

22 Կաղանկատվացի, գիրք I, ԻԳ։ Օրբելյան, ԾԱ, էջ 268։

կնիքներ փոստի, հողերի նվիրատվության, գաղտնի գրասենյակի և այլնի համար[23]։ Մասուդին մանրամասն նկարագրում է Խոսրով I Անուշիրվանի չորս և Խոսրով II Փարվեզի տասը կնիքները։ X դարի մեկ այլ պատմիչ՝ ալ-Ջահշիյարին խոսում է սասանյան դինաստիայի հիմնադիր Արտաշիր I-ի չորս կնիքների մասին, որոնք օգտագործվում էին հետևյալ նպատակների համար. զինվորական հրամանների՝ «Տոկունություն» մակագրությամբ, հարկերի, ֆինանսների և շինարարության՝ «Հաստատում» մակագրությամբ, փոստի՝ «Աճապարանք» մակագրությամբ և դատական գործերի՝ «Արդարություն» մակագրությամբ (վերջին մակագրությունը բազմիցս հանդիպում է սասանյան կնիքների վրա)[24]։ Ըստ երևույթին տարբեր կնիքներ ունեին նաև հայ նախարարները և բարձր հոգևորականությունը։ Նախարարական տներն ունեին իրենց կնիքները, որոնք պաշտոնական կնիքներ էին և օգտագործվում էին պետական նշանակություն ունեցող փաստաթղթերի վավերացման ժամանակ։ Այս կնիք-մատանիները հավանաբար կոչվել են «տէրունական»[25]։ Նախարարներն ունեցել են իրենց անձնական՝ «սովորական» մատանիները, որոնք օգտագործվել են նախարարության սահմաններում ներքին նշանակության փաստաթղթերի վավերացման ժամանակ։ Այն նախարարները, որոնք մասնակցել են երկրի կառավարմանը և ունեցել են պաշտոններ, նույնպես կրել են իշխանությունը խորհրդանշող կնիքներ։ Դրանց թվում կարող էր լինել մարզպանը, հազարապետը, սպարապետը, ավելի վաղ՝ մարդպետը, թագադիր ասպետը և այլն։ Նույն երևույթը նկատվում է նաև եկեղեցական հիերարխիայում։ Այստեղ ևս եղել են «սովորական», «տիրական», «հայրապետական» մատանի-կնիքներ, որոնք դասդասվել են իրենց նշանակությամբ[26]։

Կնիքներով վավերացումների մասին պատմական աղբյուրներում պահպանված վկայությունների այս համառոտ թվարկումը կարևոր էր՝ ճիշտ հասկանալու համար կնքադրոշմների նշանակությունը։ Մասնավորապես հետաքրքիր է կնիքների վրա հանդիպող սյուժեների և առանձին կերպարների քննությունը, նրանց սիմվոլիկայի հարցերի պարզաբանումը։ Թողնելով դրանք հետագա ուսումնասիրության համար, հարկ ենք համարում անդրադառնալ կնքադրոշմների կիրառության որոշ հարցերի վրա, ելնելով հատկապես Դվինում հայտնաբերված նյութերից։

Դվինի կնքադրոշմների վրա հանդիպում են միևնույն կնիքների կրկնություններ։ Դա հիմնականում վերաբերում է Հայաստանի պատմության թանգարանում պահվող 2197/313 (20 կնիքով), 314 (45 կնիքով), 315 (12 կնիքով) և 333—5 (4 կնիքով) կնքադրոշմներին, որոնցից յուրաքանչյուրի վրա արագիլի և ամուրի պատկերով կնիքները պարտադիր դրոշմված են (նկ. 8 և 9)։ Նույնպիսի կրկնություն նկատում ենք նաև 2197/316 և 333—4 կնքա-

---

23 Н. Пигулевская, Города Ирана в раннем средневековье, М.—Л., 1956, էջ 215։ Л. Я. Борисов, В. Г. Луконин, Сасанидские геммы, Л., 1963, էջ 10։

24 Л. Я. Борисов, В. Г. Луконин, նշվ. աշխ., էջ 10—11։

25 Բ ո վ մ ա Ա ր ծ ր ո ւ ն ի, Պատմութիւն տանն Արծրունեաց, Կոստանդնուպոլիս, 1852, էջ 157։ Ռիչարդ Ֆրայը, խոսելով սասանյան պաշտոնական կնիքների մասին, այն հետաքրքիր միտքն է հայտնում, որ միայն արձանագրություն կրող կնիքները պատկանել են պաշտոնական անձանց։ Այս երևույթը նա նկատում է դեռևս հունա-հռոմեական աշխարհում (տե՛ս Ричард Фрай, Наследие Ирана, М., 1972, էջ 202—203, 296—297)։

26 Օ ր բ ե լ յ ա ն, ԽԸ, էջ 249, 253, ԽԹ, էջ 255, ԾԱ, էջ 268, 273։

դրոշմների վրա (դրոշմված է կնիք՝ վասիանի պատկերով, վերևում՝ կարճ (նկ. 10)։ 1972 թ. կենտրոնական Թաղամասում գտնված 9 կնքադրոշմներից երկուսի վրա կրկնվում է միևնույն կնիքի դրոշմը արձանագրությամբ (նկ. 11)։ 2197/314 45 կնիքով՝ կնքադրոշմի վրա 6 կնիքներ կրկնվում են երկու անգամ, 3 կնիք՝ երեք անգամ և չորս ու հինգ անգամ՝ մեկական կնիքներ։ Ընդամենը այդ կնքադրոշմի կնքմանը մասնակցել են 20 անձնավորություն։

Այս հետաքրքիր երևույթը բնորոշ է ոչ միայն Դվինի կնքադրոշմներին։ Վ. Լուկոնինը նշում է, որ տարբեր վայրերից հայտնաբերված սասանյան կնքադրոշմների վրա հաճախ հանդիպում են միևնույն կնիքների արտատպությունները միևնույն անձանց անուններով։ Կան դեպքեր, երբ մի կնքադրոշմի վրա նույն դրոշմը կրկնվում է 2—3 անգամ[27]։



Որպեսզի քիչ թե շատ բացատրվի այս հանգամանքը, համառոտ անդրադառնանք կնքադրոշմների կիրառական կողմին։

Հայտնաբերված նյութերը և գրավոր աղբյուրները ցույց են տալիս, որ հատկապես վաղ միջնադարում սասանյան Իրանում և նրան ենթակա ու նրա ազդեցության տակ գտնվող երկրներում բոլոր տիպի վավերագրերը, լինեն դրանք իրավական, տնտեսական, քաղաքական կամ այլ բնույթի, կնքվում էին համապատասխան անձնավորությունների կողմից։ Արքունիքից դուրս եկող պետական նշանակություն ունեցող փաստաթղթերի բնօրինակները տրվում էին պետական դիվանին ի պահ։ Նույն կերպ էին վարվում այլ երկրներում, նաև Հայաստանում։ Քանի որ վկայություն կա այն մասին, որ Դվինում գոյություն է ունեցել պետական դիվան, ապա պարզ է, որ այնտեղ պահվում էին Դվինում վավերացված պաշտոնական փաստաթղթերը, ինչպես նաև ողջ արտաքին գրագրությունը։

Դվինի դիվանը, որը հիմնադրվել է, հավանաբար, վերջին Արշակունիների օրոք, իր գոյությունը շարունակում էր նաև մարզպանական շրջանում[28]։ Հետաքրքիր վկայություն է պահպանվել Սեբեոսի մոտ Սյունյաց աշխարհի դիվանը Դվինից Փայտակարան տեղափոխելու մասին. «Տարցեն զդիւան աշ-

---

[27] V. G. Lukonin, Iran, II. Des Seleucides aux sasanides, Genève, 1967, էջ 109։ Տե՛ս նաև՝ „Sasanian Remains from Qasr-i Abu Nasr". M. E. Masson, Г. А. Пугаченкова, հշվ. աշխ., էջ 161։

[28] Կ. Գ. Զաքարյան, Պետական դիվանի մնացորդները Դվինում, «Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 2։ Հոդվածում քննարկված են նաև Դվինի կնքադրոշմները, որոնք հեղինակը կապում է եկեղեցական փաստաթղթերի վավերացումների հետ։

խարհին Սիւնեաց ի Դրունայ ի Փայտակարան քաղաք[29] (հավանաբար Դվինի արխիվից առանձնացվել են Սյունյաց նախարարության հետ առնչվող փաստաթղթերը)։

Հայ իրականության մեջ փաստաթղթերի ձևերի վերաբերյալ կան պատմական բազմաթիվ վկայություններ։ Համապետական նշանակություն ունեցող փաստաթղթերի վավերացմանը մասնակցություն են ունեցել երկրի հոգևոր և աշխարհիկ բարձրաստիճան անձինք, սակայն եղել են նաև այլ տիպի փաստաթղթեր՝ արտոնագրեր, նամակներ և մասնավոր պարտավորություններ[30], որոնց կնքմանը անպայման մասնակցել են գործարքը ձեռնարկող երկու կողմերը, ինչպես նաև, պարտադիր կարգով, գատական ներկայացուցիչը, որը հոգևորական էր։ Եվ պատահական չէ, որ բազմակնիք կնքագրոշմների վրա մեծ մասամբ հանդիպում են մոգերի կամ հոգևորականների կնիքներ։ Վ. Լուկոնինը նման փաստաթղթերը համարում է իրավական[31]։ Սասանյան իրավական դրականության մեջ կան բազմաթիվ հոդվածներ փաստաթղթերի կնքմանը[32] դատավորների մասնակցության մասին։ Այսպես. «Դատավորի կամ մոգպետի կողմից կնքված նամակը չներկայացնելու դեպքում իմ գույքը պատկանում է քեզ»[33]։ Կնոջը կամ երեխաներին վատ վարքի կամ այլ պատճառներով ժառանգությունից զրկելու համար ամուսինը «եթե գրի և դնի դատավորի կնիքը», ապա մահվանից հետո նրա կամքը կկատարվի[34]։ «Սասանյան դատաստանագրքի» հոդվածներից մեկում նշվում է, որ մոգպետների պաշտոնական կնիքները առաջին անգամ շրջանառության մեջ են մտել Կավադ արքայի հրամանով, իսկ դատավորների կնիքները՝ նրա որդի Խոսրովի հրամանով։ Մոգպետների կնիքների վրա փորագրված էր, որ նրանք հանդես են գալիս զրկվածների շահերի պաշտպանությամբ[35]։ Այսպիսի արձանագրությամբ մի կնքագրոշմ հայտնի է Քասր-ի Աբու-Նասրից[36]։ Դատավորների կողմից փաստաթղթերը կնքելու վերաբերյալ հետաքրքիր վկայություններ է բերում Բարտոլոմեն[37]։

---

29 Ս ե ր ե ո ս, Պատմութիւն ի Հերակլն, Թիֆլիս, 1913, էջ 40։

30 Կնքագրոշմների կիրառության մեջ մի հետաքրքիր և տխուր փաստ արձանագրված է Ղևոնդի մոտ։ Խոսելով Հարուն ալ-Ռաշիդ խալիֆի օրոք հարկահանության և բռնությունների ուժեղացման մասին, նա հիշատակում է ոմն Իբն Դոկեի, «որ եկեալ ի քաղաքն Դուին՝ սաստիկ դժնդակութեամբ խոշտանգէր զբնակիչս աշխարհիս հարկապահանջութեամբ...» և «տայր կնիք կապարեայ դնել յամենեցուն պարանոցսն, և առ մի մի կնիք պահանջեր զբազում զուղայս մինչև հասանել մարդկան ի յետին տնանկութիւն յանհամբեր նեղութեացն առ ի չարաչուց դահճէն» (տե՛ս «Պատմութիւն Ղևոնդեայ Մեծի վարդապետի հայոց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 201—202)։

31 В. Луконин, Сасанидские буллы, էջ 34։

32 Л. Г. Периханян, նշվ. աշխ., էջ 409, 416 և հտ.։

33 В. Луконин, նշվ. աշխ., էջ 34։

34 Н. Пигулевская, Города Ирана в раннем средневековье, էջ 137։

35 Л. Периханян, նշվ. աշխ., էջ 270, հոդվ. 93, 4—9։

36 Ա. Փերիխանյանը շատ դիպուկ նկատել է, որ Փավստոս Բուզանդը Ներսես կաթողիկոսի բնութագիրը տալիս նրան ներկայացրել է որպես «ջատագով ամենայն զրկելոց» (նույն տեղում, էջ 466)։

37 Н. Пигулевская, նշվ. աշխ., էջ 128։ Ch. Bartolomae, Zum Sasanidischen Recht, V, „Sitzungsberichte des Heidelberger Academie der Wissenschafteen, Phil. Hist. Klasse", 1922.

Դվինում գտնված խաչազարդ կնիքով կնքադրոշմները, մեր կարծիքով, տեղական են, այսինքն վավերացումները կատարվել են Դվինում։ Ի՞նչ կռվաններ ունենք նման ենթադրություն կատարելու համար։

Վ. Լուկոնինը իրավացիորեն նշում է, որ նշանով կնիքները պատկանել են մոգերին և մոգպետներին[38]։ Մեր ժողովածուի կնքադրոշմների վրա (թվով 6 հատ), որոնք կրում են խաչանշան կնիքներ (նկ. 1—7), նշանով դրոշմները բացակայում են, մի հանգամանք, որն արդեն ցույց է տալիս քրիստոնեական միջավայրում դրանց պատրաստված լինելու մասին։ Ոչ մի խաչանշան կնիք չունի պահլավերեն արձանագրություն, մինչդեռ կնքադրոշմների մյուս կնիքների մի մասը պատկերներին զուգահեռ ունի համառոտ արձանագրություններ։ Ընդհակառակը, 2197/313 կնքադրոշմը (20 կնիքով) կրում է երկու խաչանշան կնիք, որոնցից մեկի վրա կա պահլավերեն արձանագրություն (նկ. 2)։ Պետք է ենթադրել, որ պահլավերեն արձանագրությամբ կնիքները պատկանել են ոչ քրիստոնյա աշխարհիկ բարձրաստիճան անձնավորությունների, կամ քրիստոնյաների, որոնք քաղաքական տարբեր նկատառումներից ելնելով, իրենց կնիքների վրա դրոշմել են այլալեզու արձանագրություն։ Նման երևույթ մենք նկատում ենք նաև հետագա դարերում։ 1940 թ. Հյուսիսային Կովկասում գտնված կնիքներից մեկի վրա պահպանված արաբերեն արձանագրությունը՝ «Ашут Бн Сибат», ցույց է տալիս, որ այն պատկանել է Աշոտ I Բագրատունի թագավորին[39]։

Արձանագրությամբ խաչանշան միակ կնիքի առկայությունը կարելի է բացատրել նաև նրանով, որ հիշյալ փաստաթղթի կամ նամակի վավերացմանը ակներևաբար մասնակցել է այլազգի հոգևոր անձնավորություն (տվյալ դեպքում կարող էր լինել քրիստոնյա պարսիկ)։

Նշաններով և խաչազարդ կնիքներով կնքադրոշմները միմյանց հետ համեմատելիս ցայտուն երևան է գալիս այն տարբերությունը, որ կա կավի որակի մեջ։ Եթե մեր կողմից տեղական համարված օրինակները քիչ թխագույն են և կավը շատ դեպքում խոշորահատիկ, ապա նշանով դրոշմները քիչ տափակ են և պատած լրացուցիչ փայլուն մասսայով, որի թափվելու հետևանքով տեղ-տեղ կնիքների պատկերները խաթարված են։ Նույնիսկ կնքադրոշմների արտաքին համեմատությունը թույլ է տալիս հանգել այն եզրակացության, որ դրանք ոչ մի կապ չունեն միմյանց հետ, լրիվ տարբերվում են կատարման տեխնիկայով և հավանաբար կապված են եղել դրսից բերված փաստաթղթերի վրա։ Յավոք, այդ տիպի կնքադրոշմները քիչ են (ընդամենը 2—3 հատ) և ավելի լայն ընդհանրացումներ կատարելը ներկայումս անհնար է։

Ինչպես նշեցինք, 2197/314 կնքադրոշմի վրա միևնույն կնիքները կրկնվում են 2 և ավելի անգամ։ Վ. Լուկոնինը ընդունելով, որ կնիքներով վավերացրել են տարբեր տիպի փաստաթղթեր, առաջին հերթին հակված է դրանք դիտել որպես առևտրական գործարքների արգասիք[40]։ Սասանյան Իրանում խիստ տարածված է եղել ապրանքների հակերի կնքումը կնքադրոշմներով։

---

38 А. Я. Борисов, В. Г. Луконин, նշվ. աշխ., էջ 42։

39 В. А. Крачковская, Печать Багратида Ашота с арабской надписью, КСИИМК, XII, М.—Л., 1946, էջ 112—117։

40 В. Луконин, նշվ. աշխ., էջ 35։

Strange-ն գրում է. «Գոյություն ունեին միջնորդներ, որոնք որոշում էին հագուստների գինը, կնքելով հակերը կնիքներով, նախքան այլ քաղաքների առևտրականներին հանձնելը։ Անցյալներում միջնորդները պատրաստում էին այդպիսի հակերը, իսկ առևտրականները գալիս էին ու գնում դրանք և յուրաքանչյուր քաղաքում, երբ բերում էին այդ ապրանքները, ուղղակի կարդացվում էր միջնորդի վկայագիրը և հակը վաճառվում էր երբեմն առանց բացելու»[41]։

Կնքադրոշմների վրա երկու և ավելի միևնույն կնիքների առկայությունը ցույց է տալիս, որ գործարքին մասնակցող անձնավորությունների մի մասը, տվյալ դեպքում արհեստավորը կամ առևտրականը, այդ հակում կամ գործարքում ուներ մի քանի բաժին՝ նյութական առումով[42]։ Հետևաբար, կարելի է ենթադրել, որ նման կնքադրոշմները անառարկելիորեն վերաբերել են առևտրական գործարքներին։

Վաղ միջնադարում սասանյան Իրանում հայտնի էին «առևտրական ընկերություններ» (hambayih) և անհավանական չպետք է համարել, որ նույնպիսի ինստիտուտներ գոյություն են ունեցել նաև Դվինում ու Հայաստանի այլ խոշոր քաղաքներում։

Դվինը վաղ միջնադարում եղել է Հայաստանի և Մերձավոր Արևելքի խոշորագույն առևտրական կենտրոններից մեկը։ Հայտնի է, որ Արտաշատը միջազգային տարանցիկ առևտրի կենտրոններից էր, այդ մասին հատուկ շեշտված է IV դարի վերջերում Բյուզանդիայի և Սասանյան Իրանի միջև կնքված պայմանագրերից մեկում[43]։ Ճշմարտացի պետք է համարել, որ Դվինը, փոխարինելով Արտաշատին քաղաքական առումով, իր վրա է վերցնում նաև տարանցիկ առևտրի կենտրոնի դերը։

VI դարի պատմիչ Պրոկոպիոս Կեսարացին գրում է, որ Դվինում «կան իրար հարևան բազմաթիվ մարդաշատ գյուղեր, ուր բնակվում են առևտրական նպատակներով [ժամանած] մեծ թվով մարդիկ։ Հնդկաստանից, հարևան Իբերիայից, մի խոսքով Պարսից ենթակա բոլոր երկրներից, որոշ չափով նաև հռոմեական [երկրից] ապրանքներ բերողները հենց այստեղ են իրար հետ առևտուր անում»[44]։ Պրոկոպիոսի այս վկայությունը արժեքավոր է նրանով, որ վերստին հաստատում է վաղ միջնադարում Դվինի միջազգային տարանցիկ առևտրի մեծ կենտրոն լինելը։

Մեզ համար կարևոր արժեք է ներկայացնում «Գիրք թղթոցում» բերվող վկայությունն այն մասին, որ նեստորականները Խուզիստանից (Խուժաստան) գալիս բնակվում են Հայաստանում և զբաղվում առևտրով. «...եկեալ բնակեցան յաշխարհիս մերում պատճառաւ վաճառաշահութեան», «...որոց ոմանք (նեստորականներից—Ա. Ք.) հասեալ յառաջագոյն յաշխարհ մեր, վաճառաշահութեամբ կեցին ընդ հարսն մեր և ընդ մեզ...»[45]։ Այս դեպքերը տեղի են ունեցել VI դարի 40-ական թթ.՝ պարսից խոսրով I արքայի գահակալության

---

41 В. Луконин. Сасанидские буллы, էջ 35։

42 Այս միտքը մեզ հայտնել է Վ. Լուկոնինը բանավոր զրույցի ժամանակ։

43 Я. А. Манандян. О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954, էջ 108—110։

44 Պրոկոպիոս Կեսարացի, Երևան, 1967, էջ 140։

45 «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901, էջ 70 և 72։

տարիներին։ Հավանաբար մինչ այդ նեստորականների մի մասը առևտրով է զբաղվել նաև Խուզիստանում։ Պատահական չպետք է համարել այն փաստը, որ Քասր-ի Աբու Նասր բնակավայրը, որտեղից գտնվել են շուրջ 500 կնքադրոշմներ[46], տեղադրված է պատմական Խուզիստան նահանգին մոտ, իսկ այդ կնքադրոշմների մեծ մասը կապված է առևտրական գործարքների հետ։ Գալով Հայաստան նեստորական վաճառականները պետք է որ առաջին հերթին բնակություն հաստատեին վաճառաշահ քաղաք Դվինում և շատ հնարավոր է, որ կնքադրոշմների վրա հանդիպող կնիքների մի մասը պատկանում է նրանց։ Դվին քաղաքի պաշտպանության և նրա առևտրի ծավալման հարցում Ալ-Համադանին, խոսելով Խոսրով I Անուշիրվանի շինարարական գործունեության մասին, նշում է, որ նա բնակեցրեց և ամրացրեց այն[47]։ Բերված վկայությունները գալիս են լրացնելու նյութական մշակույթի մնացորդների տվյալները։ Գտնված կնքադրոշմներից մի մասն, անշուշտ, առևտրական գործարքների արդյունք է, և թվագրվում է V—VI դդ.։

Կնքման տրադիցիան շարունակվել է նաև արաբական և հետարաբական շրջանում, երբ Դվինը չի կորցնում իր առևտրական նշանակությունը։ Այդ մասին բազմաթիվ վկայություններ են պահպանել արաբ մատենագիրներ Ալ-Յակուբին[48], Ալ-Իստահրին[49], Ալ-Մուկադասին[50], Իբն Հաուկալը[51] և ուրիշներ։

Դվինում գտնված վերոհիշյալ կնքադրոշմների վրա հանդիպում են երկու կնիքներ, որոնք կրկնվում են առանձին վերցրած 4 կնքադրոշմի վրա (3-ը՝ մեծ, մեկը՝ փոքր)։ Ուրեմն այդ կնքադրոշմները արվել են նույնատիպ վավերացումների ժամանակ և պատկանում են նույն ժամանակաշրջանին։ Միևնույն անձնավորությունների կնիքների կրկնությունը տարբեր կնքադրոշմների վրա տեղիք է տալիս որոշ ենթադրությունների։ Ի՞նչ կարելի է ասել այս երևույթի մասին։ Բոլոր դեպքերում վավերացման գործարքին մասնակցել են երկու անձնավորություններ, որոնց գրված գիրքը թելադրել է նրանց պարտադիր մասնակցությունը այդ ակտերի կատարմանը։ Ո՞վքեր են եղել այդ անձինք, դժվար է ասել։ Կա՛մ քաղաքի, կա՛մ երկրի կառավարման մասնակցություն ցուցաբերող բարձրաստիճան պաշտոնյաներ, կա՛մ, գուցե, առևտրական և համքարական ընկերության ղեկավարներ[52]։ Բոլոր դեպքերում հարցի նման լուծումն էլ ինքնին հետաքրքիր է սոցիալ-տնտեսական հարաբերությունների առումով։

---

46 V. G. Lukonin, նշվ. աշխ., էջ 108։

47 СМОМПК, вып. XXIX, էջ 15։

48 Նույն տեղում, XXXII, էջ 59։

49 Նույն տեղում, XXIX, էջ 19։

50 Նույն տեղում, XXXVIII, էջ 6, 7, 14։

51 Նույն տեղում, էջ 92։

52 Ն. վ. Պիգուլևսկայան նշում է, որ Սասանյան Իրանում VI դարում գոյություն ունեին նաև առևտրական կորպորացիաներ, որ նրանց ղեկավարը կոչվում էր «վաճառականների ավագ»։ Այդ մասին պահպանվել են գրավոր վկայություններ (տե՛ս Н. В. Пигулевская, Производство шелка в Византии и Иране в IV в., ВВ, т. X, М., 1956, էջ 6)։

САСАНИДСКИЕ БУЛЛЫ ИЗ ДВИНА И ВОПРОСЫ ИХ ПРИМЕНЕНИЯ

А. А. КАЛАНТАРЯН

(Резюме)

Для изучения материальной культуры раннесредневековой Армении и ее торгово-экономических и культурных связей с Сасанидским Ираном особое значение имеют находки глиняных булл с многочисленными оттисками печатей. Основная их часть найдена в цитадели города Двина, в одной из малых комнат дворцового сооружения марзпанской эпохи, и датируется VI—VII вв.

Самые древние буллы Армении обнаружены в урартской крепости Тейшебаини, где ими опечатывались хозяйственные помещения. В античных городах они встречаются весьма редко. В сасанидское время буллы были широко распространены, о чем говорят многочисленные находки в Каср-и Абу Наср, Тахт-и Сулейман, в памятниках Средней Азии и др. Буллами запечатывались разные документы политического, хозяйственного, юридического и религиозного характера. Находки в Двине, представляющие собой важное звено сасанидской глиптики, позволяют уточнить ряд вопросов, связанных с употреблением булл. Буллами опечатывались также тюки с товарами, на что указывают следы ремней на оборотной стороне булл. Двин был крупнейшим центром транзитной торговли. О его интенсивных торговых сношениях говорят не только письменные источники, но также находки тождественных оттисков в Двине и Каср-и Абу Наср. В торговле участвовали даже духовные лица, что отражено в правилах, принятых на Двинском соборе 554 г., и подтверждается наличием оттисков с изображением креста. В середине VI в. в Двине обосновались несториане, выходцы из Хузистана, которые также занимались торговлей.

В армянских средневековых источниках имеется много упоминаний о применении печатей, скреплении ими гражданских и церковных документов. Выделяются печати «личные», «царские», «простые» и т. д. Право на ношение печатей имела только знать. Та же картина наблюдается и в церковной иерархии.